

ՀԱՅՐԵՆԻ ԹԵՄԵՐՈՒՄ

ՎՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ

Հուլիսի 14-ին Վրաստանի թեմական առաջնորդ գերապատիվ Տ. Վարդան եպիսկոպոսը առաջնորդի օգնական հոգեշնորհ Տ. Վահան աբեղա Գալամդարյանի և թեմական խորհրդի անդամ պ. Հակոբ Տեր-Հարությունյանի ուղեկցությամբ հովվական այցելության համար մեկնեց Ախալքալաք քաղաքը։

Թբիլիսիի օդանավակայանում առաջնորդ սրբազանին ճանապարհեցին քահանայից դասը, թեմական խորհրդի անդամները և հավատացյալները։

Ախալքալաքում սրբազան առաջնորդը դիմավորվեց տեղի քահանայական դասի, երդեցիկ դպրաց խմբի և հավատացյալների կողմից ու պատշաճ հանդիսավորությամբ առաջնորդվեց Ս. Խաչ եկեղեցին, որտեղ մտավ «Հրաշափառ»-ով։

Օրը շաբաթ էր, եկեղեցին լիքը հավատացյալներով։ Առաջնորդ սրբազանի նախագահությամբ կատարվեց երեկոյան հանդիսավոր ժամերգություն։ Արարողության վերջում Վարդան սրբազանը Ախալքալաքի հայությանը հաղորդեց Նորին Ս. Օծությունն Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնություններն ու ողջույնները։ Ախալքալաքի հավատացյալ ժողովուրդը եռկյուղած ջերմեռանդությամբ, արտասվակաված աչքերով ընդունում էր Վեհափառ Հայրապետի օրհնությունները և իր սրտի խորքից մրմնջում. «Աստված երկա՞ր կյանք տա մեր ազիզ Հայրապետին»։ Իր խոսքի ընթացքում Վարդան սրբազանը եկեղեցում հավաքված բազմությանը հաղորդեց նաև Սփյուռքի հայության ջերմ ողջույններն Ախալքալաքի հայության։ Սրբազանն ասաց, որ Սփյուռքի հայության սրտագին ցանկությունն է մի օր դալ, ապրել ու աշխատել իրենց նախնյաց Հայրենիքում։

Արարողությունից հետո առաջնորդ սրբազանը հյուրասիրվեց իր ուղեկիցներով եկեղեցական խորհրդի անդամ Ռաֆայելյանների բնակարանում։

Հուլիսի 15-ին, կիրակի օր, գերաշնորհ Տ. Վարդան սրբազանը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Ս. Խաչ եկեղեցում։ Եկեղեցին լիքն էր բազմությամբ։ Շատեր եկել էին հեռավոր շրջաններից և գյուղերից։ Սուրբ պատարագը երգեց տեղի երգեցիկ խումբը, որին ձայնակցում էր ամբողջ եկեղեցին։ «Հայր մեր»-ից առաջ քարոզեց պատարագիչ սրբազանը։ Նա խոսեց Ս. Էջմիածնի հոգևոր, բարոյական, մշակութային դերի մասին, որ նա կատարել է հայ կյանքում։ Ապա նա եզրակացրեց, որ հայոց պատմությունը անցյալում տառապանքների և նեղությունների, կոտորածների և տեղահանությանց մի անվերջ շղթա է եղել, իսկ Հայ Եկեղեցին այդ տխուր օրերին գորովագութ մոր նման իր թևերի տակ առել, պահել ու պահպանել է հայ ժողովրդին։ «Մեր եկեղեցու միության արտահայտությունն է Ամենայն Հայոց Հայրապետու-

թյունը,— ասաց նա,— Ս. Էջմիածնով, որ Հայ Եկեղեցու ծագման և հաստատության օրրանն է»։ Ապա քարոզիչ սրբազանը բարեմաղթություններ արեց նորընտիր Վեհափառ Հայրապետի կյանքի արեշատության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անշարժության համար։

Հավատացյալների համար հոգեկան խոր ապրումների սրբազան ակնթեր հանդիսացան սուրբ պատարագն ու սրբազան հոր քարոզը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց տեղի եկեղեցական խորհրդի և վերատուիչ հանձնախմբի անդամների ընտրությունը։

Սրբազան հոր կարգադրությամբ միջոցներ ձեռք առնվեցին եկեղեցու գործերը առավել ևս օրինակելի կարգապահության մեջ դնելու համար։

Երեքշաբթի, ամսի 17-ին, առաջնորդ սրբազանը մեկնեց Ախալցխա, ուր ևս զբաղվեց նմանապես եկեղեցական գործերով։

Որոշվեց հանդիսավորապես նշել հանգուցյալ Տ. Կարապետ արքեպիսկոպոս Բաղրատունու մահվան 100-ամյակը։

Հուլիսի 18-ին հովվական այցելությունից Թբիլիսի վերադարձավ առաջնորդ սրբազանը։

ԹԲԻԼԻՍԻԻ ԹՂԹԱԿԻՑ

ՇԻՐԱԿՅԱՆ ԽՐՈՆԻԿԱ

Վեհափառ Հայրապետի հրամանով անցյալ հունվարի 1-ին հոգեշնորհ Տ. կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը նշանակվեց Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ։ Անցնող ութը ամիսների ընթացքում, շնորհիվ Տ. Կոմիտաս վարդապետի ջանքերի և նվիրված գործունեության, թեմի եկեղեցական և հոգևոր կյանքի մեջ զգալի փոփոխություն է նկատվում։ Ուրախությամբ պետք է արձանագրել այն փաստը, որ Հայաստանյայց

Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու երգեցիկ խումբը

Առաքելական Եկեղեցու հոգևոր զարթոնքի մի նոր շրջան է սկսվել ազգընտիր Հայրապետի երջանիկ գահակալությամբ։ Բոլոր հավատացյալների խորին համոզմունքն է